Հաստատված է
Շուշիի տեխնոլոգիական համալսարանի
գիտական խորհրդի 2022թ. փետրվարի 1-ի
N1-02/22/7 որոշմամբ:
Փոփոխությունը կատարվել է գիտական խորհրդի
2025 թ.-ի փետրվարի 26-ի N1-02/25/1 որոշումով:

Ռեկտոր՝

Ն.Ա.Միքայելյան

ՇՈՒՇԻԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՊԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ

Սույն փաստաթղթով սահմանվում է «Շուշիի տեխնոլոգիական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ՇՏՀ) քաղաքականությունը հանրային կապերի ոլորտում, այդ քաղաքականության նպատակները, խնդիրներն ու իրականացման մեխանիզմները (Փոփ.կատ.են 26.02.2025, N1-02/25/1):

ՇՏՀ-ի քաղաքականությունը հանրային կապերի (PR- public relations) ոլորտում համահունչ է ՇՏՀ-ի զարգացման ռազմավարական ծրագրի III խնդրին՝ «Արտաքին կապեր և միջազգայնացում» և V խնդրին՝ «Ուսանողներ, գործատուներ և հասարակություն», այն է՝ նպաստել ՇՏՀ-ի ու նրա գործունեության ճանաչմանն ու արտաքին օժանդակությանը, հասարակության հետ կապերի զարգացմանը և հանրային ծրագրերում նրա առավելագույնս ներգրավմանը՝ աջակցելով ՀՀ հանրապետության հասարակության մտավոր, կրթական, տնտեսական, գիտական և մշակութային առաջընթացին (Փոփ.կատ.են 26.02.2025,N1-02/25/1):

PR ոլորտում ՇՏՀ-ն առաջնորդվում է ՀՀ հանրապետության գործող օրենքներով, ՇՏՀ-ի գիտական խորհրդի որոշումներով, ռեկտորի հրամաններով և այլ իրավական փաստաթղթերով (Փոփ.կատ.են 26.02.2025,N1-02/25/1):

Սույն քաղաքականության իրականացման համար պատասխանատու են ՇՏՀ-ի ռեկտորը, լրատվության և հասարակայնության հետ կապերի պատասխանատուն, որակի ապահովման, դիմորդների և շրջանավարտների հետ տարվող աշխատանքների համապատասխան ստորաբաժանումները (Փոփ.կատ.են 26.02.2025,N1-02/25/1):

Այս ոլորտում ՇՏՀ-ի գործունեության հիմնական նպատակներն են.

• PR-ի միջոցով բարձրացնել ՇՏՀ-ի վարկանիշը, մեծացնել նրա ազդեցությունը ՀՀ հանրապետությունում և արտերկրում (Փոփ.կատ.են 26.02.2025,N1-02/25/1):

• Հանրության մեջ ձևավորել հետաքրքրություն ՇՏՀ-ի նկատմամբ՝ նպաստելով ուսանողների թվի շարունակական աճին:

• Կատարել ՇՏՀ-ի խոցելի կողմերի PR:

• Չեզոքացնել ՇՏՀ-ի նկատմամբ իրականացվող սև PR-ը:

• Խթանել ՇՏՀ-ում ուսանողների և դասախոսների նախաձեռնողականությունը, առաջխաղացումն ու ճանաչումը:

• Նպաստել ՀՀ մտավոր, տնտեսական, կրթական և գիտամշակութային առաջընթացին՝ հանրային տարատեսակ ծրագրերի մասնակցելու միջոցով (Փոփ.կատ.են 26.02.2025,N1-02/25/1):

ՇՏՀ-ի PR քաղաքականության հիմնական խնդիրներն ու իրականացման մեխանիզմներն են.

• ՇՏՀ-ի գործունեության վերաբերյալ իրազեկել հասարակայնությանը, ՇՏՀ-ի պաշտոնական կայքի <http://shush-tech.com/> միջոցով լուսաբանելով միջոցառումները, իրադարձությունները, հայտարարությունները, նորությունները (ՇՏՀ-ում միջոցառումների իրազեկման և ՇՏՀ-ի պաշտոնական կայքով լուսաբանման հայտի ձևը ներկայացված է հավելվածում), տրամադրել տարբեր պաշտոնական կայքերից ձեռքբերված անհրաժեշտ տեղեկատվություն (Փոփ.կատ.են 26.02.2025,N1-02/25/1):

• Ընդլայնել և ակտիվացնել ՇՏՀ-ի գովազդարշավը (տպագրել թռուցիկներ, բրոշյուրներ, փոստային և հեռախոսային տեղեկագրքեր և այլն)՝ այդ գործընթացում առավելագույնս ներգրավելով ուսումնական բոլոր ստորաբաժանումները, ուսանողական կառույցները, հիմնական գործատուներին և շահագրգիռ այլ կազմակերպություններ (Փոփ.կատ.են 26.02.2025,N1-02/25/1):

• Պարբերաբար կազմակերպել մամուլի ասուլիսներ, ընդունելություններ, պաշտոնական միջոցառումներ, պատրաստել մամլո հաղորդագրություններ՝ ՇՏՀ-ի գործունեությունը ներկայացնելու նպատակով (Փոփ.կատ.են 26.02.2025,N1-02/25/1):

• Կատարելագործել ՇՏՀ-ի ինտերնետային կայքը՝ ապահովելով անհրաժեշտ լրատվությամբ (Փոփ.կատ.են 26.02.2025,N1-02/25/1):

- Բազմազանեցնել տեղեկատվության տարածման ձևերը, միջոցները և շրջանակները (ակտիվ համագործակցել ԶԼՄ-ների հետ)՝ շեշտը դնելով արդի տեղեկատվական տեխնոլոգիաների ինտենսիվ կիրառության վրա և «ներքին սպառողից» այն ուղղել դեպի «արտաքին սպառող»:
- ՇՏՀ-ի գովազդային-լրատվական, քարոզչական և մարքեթինգային բոլոր կարողությունները նպատակաուղղել նրա դրական հեղինակության պահպանմանն ու ամրապնդմանը, ինչպես նաև հասարակական վարկանիշի բարձրացմանը (Փոփ.կատ.են 26.02.2025, N1-02/25/1):
- Կազմակերպել ՇՏՀ-ի վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրություններ՝ նրա գործունեությունը ՀՀ հանրապետության հասարակության արդի պահանջմունքներին համահունչ դարձնելու նպատակով (Փոփ.կատ.են 26.02.2025, N1-02/25/1):
- Համակարգել ՇՏՀ-ի հնարավորությունները՝ ստեղծելու ծառայությունների միասնական ծրագիր՝ ընդգրկելով նրա բոլոր հիմնական ստորաբաժանումներն ու կառույցները (Փոփ.կատ.են 26.02.2025, N1-02/25/1):
- Նպաստել ՇՏՀ-ի ներգրավմանը հանրային կարիքներին ուղղված տեղական, տարածաշրջանային և պետական ծրագրերում (Փոփ.կատ.են 26.02.2025, N1-02/25/1):
- Ակտիվացնել առաջարկվող կրթական ծրագրերի և մասնագիտությունների գովազդը, ապահովել անհրաժեշտ տեղեկատվության մատչելիությունը՝ մասնավորապես, հանրապետության հանրակրթական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների համար:
- Պարբերաբար նախաձեռնել և իրականացնել ծրագրեր և միջոցառումներ՝ շրջանավարտների, բարերարների և այլ աջակցողների նվիրատվությունները, շնորհները և ներդրումային ծրագրերը լուսաբանելու և հանրությանը ներկայացնելու համար: Նրանց հետ զարգացնել և պահպանել երկարաժամկետ գործակցային հարաբերություններ:

Գիտական խորհրդի նախագահ՝ Ն.Ա. Միքայելյան

Գիտական քարտուղարի ժ/պ՝ Լ.Գ.ԱՅԴԻՆՅԱՆ